ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03/22
***«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ»* ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)**
2023 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ)

Անահիտ Հարությունյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Նանե Կարապետյան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)

Արմեն Քոչարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմակերպատնտեսական վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ)

Արմենուհի Պետրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում:
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված:

1) Օրակարգի 1-ին հարց

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ԵՔ-ԴՄ-ԵԿ 02/23 ծածկագրով դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեներ	Մասնակիցների էլ. հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարներ	Մասնակիցների առաջարկած գինը հազար /ՀՀ դրամ/
1	«ԱԼՏԵՐԱ ԼԱԲ» ԿԵՀԿ	ք. Ապարան, Գրիբոյեդովի փ. 2 փկղ. տ. 3/1	infoalteralab@gmail.com	+37493418481	25,718.0
2	«Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ	ՀՀ ք. Արարատ, Շահումյան 24/1	araratyouthcenter@gmail.com	+37495335511	23,652.0
3	«Դիլիջանի երիտասարդական կենտրոն» ՀԿ	ՀՀ ք. Դիլիջան, Հակոբջանյան 3 նրբ., տուն 21	info@yccd.am	+37477772505	24,000.0
4	Իմփաքթ Հաբ Արմենիա Սոցիալական Նորարարության Զարգացման Հիմնադրամ	ք. Երևան, Տիգրան Մեծ 80	gevorg.poghosyan@impacthub.net	+37494422256	51,990,0
5	Նոյեմբերյան համայնքի զարգացման և ներդրումների հիմնադրամ	ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյան համայնք, Երևանյան փողոց, տուն 16	noyemberyanfound@gmail.com	+374353233	30,203.36
6	«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ	ք. Սևան, Նաիրյան 164	rdrcngo@mail.ru	+37499085814, +37491591272	52,281.72

Հանձնաժողովը ուսումնասիրելով հայտերը նկատեց, որ՝

1. «ԱԼՏԵՐԱ ԼԱԲ» կրթական երիտասարդական ՀԿ կողմից ներկայացրած հայտադիմումում մրցույթի ծածկագիրը սխալ է լրացված:
2. «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ կողմից ներկայացված փաստաթղթերի վրա բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:
3. Իմփաքթ Հաբ Արմենիա Սոցիալական Նորարարության Զարգացման Հիմնադրամի կողմից ներկայացրած փաստաթղթերի վրա բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, հայտադիմումում մրցույթի ծածկագիրը սխալ է լրացված, Հավելված 2-ը տարբերվում է հրավերով սահմանված ձևաչափից, կազմակերպության կողմից ավելացվել են ծախսային տեսակներ, որոնք չեն համապատասխանում հրավերի պահանջին և բացակայում են գնային հիմնավորումները:
4. Նոյեմբերյան համայնքի զարգացման և ներդրումների հիմնադրամի կողմից ներկայացված փաստաթղթերի վրա բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:
5. «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ կողմից ներկայացրած հայտադիմումում մրցույթի ծածկագիրը սխալ է լրացված, բացակայում են նաև կազմակերպության նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառությունը հավաստող փաստաթղթերը:

Օրակարգային 1-ին հարցի քննարկումից հետո 5 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ քվեարկության արդյունքում որոշվեց.

Խնդրել Հանձնաժողովի քարտուղարին դիմել Կազմակերպություններին՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտերում առկա անճշտությունները և Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ուղարկել լրամշակված հայտերը:

2) Օրակարգային 2-րդ հարց

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո 5 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել ս.թ. մարտի 3-ը, ժամը 15:00, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 605 աշխատասենյակում, հասցե՝ Վազգեն Սարգսյան 3:

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» **ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**